ՄԵՐՈՒԺԱՆ ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ

Մերուժան Սարգսի Տեր-Գուլանյանը ծնվել է 1948 թվականի նոյեմբերի 29-ին, Ջավախքում։

1973 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինը։

1973 թվականից աշխատել է «Գարուն» ամսագրում, որպես գիտական աշխատող, այնուհետև՝ բաժնի վարիչ, ապա գլխավոր խմբագրի տեղակալ, իսկ 1988-1990 թթ՝. ամսագրի գլխավոր խմբագիր։

Գրող, հրապարակախոս Մերուժան Տեր-Գուլանյանը 1988-1993թթ. եղել է «Ջավախք» հայրենակցական միության հիմնադիրը և ղեկավարը։

1978 թվականից Մերուժան Տեր-Գուլանյանը Հայաստանի Գրողների միության անդամ է։

Մ. Տեր-Գուլանյանը եղել է ավելի քան 500 էսսեների, ակնարկների, հրապարակախոսական հոդվածների հեղինակ։

1990 թվականին եղել է ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավոր և ՀՀ ԳԽ լրատվության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ և ԳԽ նախագահության անդամ։

1995-99 թթ. եղել է ՀՀ ԱԺ պատգամավոր, գիտության, կրթության և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ։

1997 թվականին հիմնադրել է «Ար» հեռուստաընկերությունը։

2006-2009 թթ. եղել է «Դե Ֆակտո» ամսագրի գլխավոր խմբագիրը։

2009-2011թթ. եղել է Հանրային հեռուսատեսության «Արարատ» հեռուստաալիքի տնօրենը։

1978 թվականին արժանացել է ՀԼԿԵՄ Կենտկոմի մրցանակի դափնեկրի կոչմանը, իսկ 1980 թվականին՝ ՀԳՄ Միքայել Նալբանդյանի անվան մրցանակի։

1993 թվականին Մ. Տեր-Գուլանյանին շնորհվել է ԱՄՆ Լուիզանայի նահանգի համալսարանի պատվավոր դոկտորի կոչում։

1999 թվականին պարգևատրվել է Ֆրիտյոֆ Նանսենի անվան ոսկե հուշամեդալով։

2011 թվականին՝ ՀՀ անկախության 20-րդ տարեդարձի առթիվ, գրող, հրապարակախոս Մ. Տեր-Գուլանյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով։

2013 թվականին պարգևատրվել է Երևանի քաղաքապետի ոսկե մեդալով։